

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Օտարագրադատիչը գիտում են ուղղակի  
Тифлисское Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և սոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են  
խրաքանչիւր թափն 2 կոպեկ:

## ԲՈՎԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

Եզրկտական խնդիրը և թիւքաց հայերը:—  
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Արաւելայից:  
Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ժողովրդական կրթութիւնը Ֆրանսիայի մէջ: Արտաքին լուրեր:—ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Խոստայի Մէլեթութիւններ:

## ԵԳԻՊՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԹԻՒՐԿԱՑ ՀԱՅԵՐ

Վարդուց է արդէն որ թիւքեան չէր կատարում Եւրոպայի պահանջներէն ոչ մինը և կարծես ծաղրում էր եւրոպացիներին, դիտմամբ յետագայով նրանց ամեն պահանջները իրադրութեամբ, ի միջի այլոց և Հայաստանի վերանորոգութիւնները խնդրէր:

Բայց եզրկտական խնդիրը նորեւումս այնպիսի մի ընթացք ստացաւ, որ թիւքեայի կարծիքը Եւրոպայի մասին երևի կատարելապէս փոխվեցաւ:

Եզրկտոսը, ինչպէս յայտնի է, գտնվում է թիւքեայի բարձր իշխանութեան տակ, թէև ունի մի յայտնի ինքնավարութիւն: Եզրկտոսի Ալեքսանդրիա քաղաքում նորեւումս պատահած եւրոպացիների սարսափելի կոտորածը ստիպեց Եւրոպային կոնֆերանցիա գումարել և Պոլսի մէջ Բ. Դուռը, որի պարտաւորութիւնն էր զօրք ուղարկել Եզրկտոս, այդ երկիրը խաղաղացնելու համար, ոչ թէ միայն չուզեց մասնակցել կոնֆերանցիային և զօրք ուղարկել Եզրկտոս, բայց այնքան երես առաւ որ բազմաթիւ շքանշաններ ուղարկելով ապստամբ Արաբի-փաշային և նրա օֆիցիներին, դրանով

ուղեց պարզապէս ծաղրել եւրոպական պետութիւնները, քաջաբերով ապստամբներին, եւրոպացիները անողորմ, գազանային կերպով ջարդողներին: Մի և նոյն ժամանակ Արաբի-փաշան ամրացնում էր Ալեքսանդրիայի ֆորտերը: Երբ անգլիական նաւատորմի կառավարիչ Սէյմուրի պահանջը դադարեցնել Ալեքսանդրիայի ամրացնելը, չէր կատարվեցաւ, անգլիական նաւատորմը սկսեց ուժեղանալ Ալեքսանդրիա և շուտով ոչնչացրեց բոլոր ամրութիւնները: Արդէն անգլիական զօրքի մի մասը ափ իջաւ, Եզրկտոսի մէջ կարգը վերականգնեցնելու համար:

Թիւքեան շուտաւ է, նա երբէք չէր սպասում որ Եւրոպան կը դիմի այդ տեսակ զործնական միջոցներին, նա ընտելացել էր արդէն այն մտքին որ Եւրոպան միայն խօսքով է պահանջում ամեն բան, պատասխան կերպով է բողբոզում, բայց երբէք չէ դիմում վեցեր յոյժին: Թիւքեան բողբոջեց համայն Եւրոպային Անգլիայի դէմ, բայց նրա բողբոջը ոչինչ հետեանք չունեցաւ:

Թէև եզրկտական խնդիրը, ըստ երևոյթի, ոչինչ կապ չունի թիւքաց Հայաստանի խնդրի հետ, բայց անկասկած Անգլիայի եւ ռուսերու զործողութիւնը ապագայում բարերար ազդեցութիւն կունենայ և Հայոց խնդրի վրա: Թիւքեան հիմա կը համոզվի որ Անգլիայի պահանջներին և բողբոջներին կարող է հարկաւոր ժամանակ հետեւել և պատերազմական զործողութիւնը, իսկ դա միակ բան է որ թիւքեայի պէս մի կառավարութեան աչքում կըլի և հեղինակու-

թիւն ունի: Նա կը համոզվի այժմ, որ այսուհետև անգլիական պարլամենտի մի որ և է անդամի հարցումը մեծ կըլի ունի և կարող է ծանր հետեանքներ ունենալ: Թիւքեան այսուհետև զոյշ կը լինի և կաշխատի անյապաղ իրագործել Եւրոպայի ամեն պահանջները: Այդ տեսակ բարեյաջող համաձայնեցից կարող էին օգուտ քաղել թիւքաց հայերը:

Իսկ Եւրոպան մի լաւ դաս առաւ: Նա չէր աշխատում թիւքեայի քրիստոնէայ ազգերին ինքնավարութիւն տալ, բայց տուեց այդ ինքնավարութիւնը մահմետական եզրկտոսին: Իսկ մահմետականները ցոյց տուեցին թէ անընդունակ են իրացնել Եւրոպական քաղաքակրթութիւնը: Հէնց որ ներկայացաւ աջող դէպքը, նրանք զազանաբար մտրեցին բոլոր եւրոպացիներին, աւերեցին երկիրը և ամբողջ այդ զործին նպաստում էին եզրկտական զօրքը, պոլիցիան և ժանդարմները, և բացի սրանից Արաբի-փաշան զօրքին ուղղված իր պրոկլամացիաներում ծաղրում էր Եւրոպան և Եւրոպական քաղաքակրթութիւնը, իսկ սուլթանը քաջաբերեց ապստամբներին անթիւ շքանշաններ ուղարկելով Եւրոպացիներին մտրեցողներին:

Հետեանք այդ յանդուգն վարմունքի երևի այն կը լինի, որ թիւքեան կատարելապէս կը կորցնի Եզրկտոսը:

Այժմ, վերջին լուրերին նայելով, թիւքեան Եւրոպայից վրէժխնդիր լինելու համար ուղարկում է իր ազէնները Տունիս, Տրիպոլիս և Հնդկաստան մահմետականներին

Փանատիկոսութիւնը եւրոպացիներին դէմ զրգուելու համար:

Բայց դա վտանգաւոր մի խաղ է, դրահետեանք այն կարող է լինել որ ամբողջ մահմետական աշխարհը կընկնի Եւրոպայի ինամակալութեան տակ և հետզհետև մահմետական երկիրները կը կորցնեն իրանց պետական անկախութիւնը:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՅԱԼՅՈՒՅՑ

Յուլիսի 2-ին

Կովկասի կառավարչապետ իշխան Գոնդուկով-Կորսակովի Արաւելայի այցելելու լուրը, արդէն տասն և հինգ օրից անկել զապիցում էր քաղաքի հասարակութեանը: Ժողովուրդը զանազան կնիքադրութիւններ և յոյսեր էր տածում իշխանի գալուտից, այս, նա սպասում էր այդ օրուան մեծ եռանդով և առանձին ոգևորութեամբ, պաշտօնապէս յայտարարած էր պատրաստվելու ամսոյ մէկին երեկոյան: Քաղաքի սանձանի մօտ, Արաստամանի ճանապարհի վրա շինված էր զեղեցիկ անցք (арка) զափններով և դրօշակներով զարդարած, որտեղ փայլում էր նուրբ ճաշակով նկարած կայսերական արձեւանքը (верб) նորա երկու կողմերում 1844 և 1882 թերը, (իշխանի Կովկասի այցելելու ժամանակամիջոցները) և այդ թերի ներքև անցքի երկու կողմը իշխանի անուան սկզբնատուները Ա. Մ.—Բ.—Կ. այդ տեղից մինչև նորին պայծառափայլութեան համար պատրաստված իշխանը պ. Յովհաննէս Ակոբջանեանցի տանը (քաղաքական պարտիզի հանդէպ) ճանապարհի երկու կողմից Ալեքսանդրեան և Միլիտանի փողոցների վրա դրօշակներով և լապ-

րակով օգնութիւնից և ձեր ողորմածութիւնից:

Ներկուրը, դուք գրում էք, թէ ինչու մենք չենք կազմակերպում կանոնաւոր զօրագումարներ Գուր հաւատարմութեամբ եղէք, որ մենք հնչում ենք կարող էինք անել այդ, և այն ևս առանց ուրիշ օգնութեան, եթէ մենք այժմ տէր լինէինք մեր առաջվայ հարստութեան և ժողովուրդին, որը, սովորի և ժամանակի պատճառով, ջրի և կաւ դէպի Շիրվան և Վրաստան: Իմ հայրը (Մէլեք-Շահնազարը) և մեր նախնիքը միշտ պահում էին իրանց մօտ այնպիսի զօրագումարը, որոնց կազմակերպելը դուք ինձանից պահանջում էք: Բայց այն ժամանակ նրանք տիրում էին ամբողջ Վարազդէ վրա, և բոլոր հայերն ու թուրքերը նրանց հպատակներն էին: Արեւմտ, եթէ դուք ցանկանում էք, որ հայոց ժողովուրդը ազատվի բարբարոսների (թաթարների) բռնակալութիւնից, եթէ ցանկանում էք, որ բոլորը (զաղթածները) կրկին վերադառնային դէպի իրանց հայրենիքը, պահանջէին կանոնաւոր զօրագումարը և լաւ ծառայութիւններ մատուցանէին մեր ամենաողորմած թագաւորին, —պէտք է որ դուք միջնորդէք, 1-ին, որ նրանք չեն մեր ջրի և կաւ ամբողջ ժողովուրդին, որոնք գտնվում են Շիրվանում և Վրաստանում, որ նրանք կրկին վերադառնային իրանց հայրենիքը (Վարաբաղ): 2-րդ, որ նրանք ազատ լինէին բոլոր հարկերից և տուրքերից երեք տարի ժամանակով: Իսկ 3-րդը այն է, որ հայերը չը լինէին թուրքերի իշխանութեան ներքոյ, որովհետև դրանք չեն կարող միշտ հաւատարիմ մնալ մեր քրիստոսապետի թագաւորի կառավարութեանը \*), այլ ընդ-

\*) Ռուսները Վարաբաղի մէլեքների ջանքերով տիրելով Վարաբաղին, նոյն մէլեքները վաղեմի թշնամի Կրթահիմ-խանին թողեցին որպէս այդ երկրի զինուոր կառավարիչ: Կրթահիմ-խանը դաւաճանեց ռուսներին և սպանվեցաւ: Նրա տեղը

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այս ինչ է գրում Մէլեք-Չուպուրը իր 1806 ամի 2 զեկտեմբերի նամակի մէջ Ս. Պետերբուրգ Աղայ Միխայիլ Լազարեանին:

Թէև եզրկտոսը առաջ մի քանի անգամ պատասխանել եմ ձեր նամակներին, բայց որովհետև չը գիտեմ, արդեօք հասնում են նրանք ձեր ձեռքը, այդ պատճառով հարկաւոր եմ համարում նորից պատասխանել ձեր բոլոր հարցերին:

Նախ, դուք դժգոհ էք այն մասին, թէ ինչու մեր (մէլեքների) անունները չեն յիշվում վրաց կենտրոնների անունների թիւում, որոնք նշանաւոր են գտնվել զանազան կախիներում:

Այդ առարկայի մասին թէև ես ինքս վշտացած եմ, բայց դարձեալ կասեմ, որ մենք իսամ սայի մէլեքներս անկել բան թէ նրանք (վրաց իշխանները) դերազանցել ենք պատերազմների մէջ և պէտք է արժանի լինէինք անկել բարձր պարգևների ու շնորհների, —բայց հանգուցեալ իշխան Յիդիանովի արտում արմատացած անողորմութիւնը դէպի հայոց ժողովուրդը (թէև Վրաստանում ծնված հայերին նա վրացիներ էր համարում) թոյլ չէր տալիս նրան հասնել ի տեղեկութիւն ամենաողորմած թագաւորի մեր կատարած ամենազոհարին ծառայութիւնները, և այն քաջութիւնները, որ մենք ցոյց տուինք գանձակի գրաւման ժամանակ, այլ և Շիրվանի ու Երևանի արշաւանքների միջոցներում: Այստեղ իշխանը (Յիդիանովը) տեսնելով ինձ իմ գեղեցիկ կերպով կազմակերպված զօրքերի հետ, որ ծառայում էին ռուսաց կառավարութեանը առանց որ և է չափ

(ձրի, առանց ուժիկ ստանալու) խոստացաւ արդարամատոյց լինել ինձ համար կայսրից դրօշակ բերել տալու, որը, կարելի է, ես կը ստանայի, եթէ չը պատահէր իշխանի հետ մի այնպիսի դժբախտութիւն (Բագուի մէջ սպանվելը):

Իշխան Յիդիանովի մահից յետոյ, ես գտնվելով այստեղ (Թիֆլիսում) և տեղեկ լինելով ինչպիսի պարսիկների բոլոր չար դիտարութիւններին, — և որպէս զի կարելի լինէ հաստատել Ռուսաստանի տիրապետութիւնը Վարաբաղի նոր գրաւած երկրի վրա, —գրաւոր կերպով բացատրեցի իմ մի քանի խորհուրդները գեներալ-մայոր Նեովիտայեվին, իսկ ես ինքս անձամբ գնացի Շուշի բերդը և միացայ ռուսաց զօրքերի հետ:

Ներք որ պարսիկները լսեցին իշխան Յիդիանովի մահուան լուրը, իսկոյն Բագու-խանին \*) որդի Աբաս-Միրզայի առաջնորդութեամբ, նրանց բազմաթիւ զօրքերը թափվեցան Վարաբաղի վրա, և միանալով տեղային թաթարների հետ, կամուրջում էին կոտորել ռուսաց ամբողջ զօրքերը, և այն բոլոր հայերին, որ գտնվում էին բերդում (Շուշի): Այդ մտքի հետ համաձայն էր և Շուշիի տիրապետող իրրահիմ-խանը, և այդ պատճառով էլ ստացաւ իր արժանաւոր պատիժը (սպանվեցաւ):

Մի և նոյն ժամանակ գեներալ-մայոր Նեովիտայեվին հաճոյ թուեցան իմ գրաւոր առաջադրութիւնները, և նա իմ խորհրդով ուղարկեց տրոիցիկ զօրագումարը Վարաբաղ, յօգնութիւն այնտեղ գտնված ռուսաց զօրքերին: Յիշուալ զօրագումարը, Գանձակից անցկենալու միջոցին, առեց իր հետ պոլովոյի կարեւորներին նրա զօրքերի հետ, և շտապեց մեղ մօտ (Շուշի) օգնութիւն հասցնելու: Բայց դեռ ճանապարհի վրա գտնված

\*) Բագու-խան կամ Բարա-խան-չահ կոչում էին պարսից Ֆաթալի-չահին:



գեցու պարիսպներում և ընծայեց Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցուն մտավածառութեան քար ու կրեայ կրպակ։

Մեղրի գիւղից մեզ գրում են որ սխալ են այն լուրերը, որ հարգելի էին «Մշակին» գիւղի տաճարի պ. Գ. Խ-ի մասին, իբր թէ նա անհոգ է գիւղի մարտնչեան վերաբերութեամբ։

Հայ հասարակութեան անդամներից շատերը կարծում են որ երբ գրպարտված են եղել մի քանի մեջ, իրանց պատասխանը անպատճառ պէտք է ուղարկեն մի այլ լրագրին։

Ստացանք Կ. Պոլսի Որբանոցի կառավարչուհի և հիմնադիր, Սրբուհի Գալֆայան մայրապետից մի նամակ, որի մեջ յարգելի մայրապետը իր շնորհակալութիւն է յայտնում այն բոլոր ուսուստանոցի հայ անձանց, որոնք իրանց նիւթական նուէրներով օգնել են Որբանոցին։

Մեզ հարգում են հեռակալ անհաւատարմ լուրեր։ «Թիֆլիսում, կաթոլիկացի փողոցում, բնակարանում է մի պարոն», Միքայէլ Մանթազանց անունով, որ չը նայելով թէ 57 տարեկան է, բայց դեռ եւ երիտասարդական աշխուժով ու եռանդով լի տղամարդ է։ Այդ պարոնի մագրերը, քանի մի տարի առաջ բոլորովին սպիտակ էին, բայց վերջին ժամանակները նրա մագրերը դեռ յանկարծ սկսեց փոփոխել առանց որ է և արհեստական միջոցներով։

Նո՛ւնի մեզ գրում են։ «Բուրք Ա-ի ձեռքով փակցրած հայ աղջկան երրորդ անգամ բերեցին ջնեխի մոտ։ Այս անգամն էլ աղջիկը խոտով փակցեց, որ իրան փակցրել, բռնաբարել են և մի և նոյն ժամանակ ստատել են որ ուրանայ ամեն բան ու ասի թէ յօսար կառնով է դնացել թուրքի հետ։ Այժմ աղջիկը հայ է պահ տուած։ Թուրքները մի քանի անգամ փորձ են փորձել աղջկան նորից փակցնելու ծածուկ կերպով։

Մեր թղթակիցը Հաւարարից գրում է մեզ։ «Ձեր լրագրից շատ անգամ խօսք է գցել Հաւարարի անտանիկի դրութեան վրա քաղաքային արհեստների կողմից, այդ թաղի հայր ու մի պակասութիւնների վրա, դարձնելով քաղաքային Գումայի ուշադրութիւնը Հաւարարի վրա։

Նե՛մ գիւղից մեզ գրում են որ այս տարի այդ գիւղի հայոց դպրոցի մեջ հարցաքննութիւնները բաւական աջողութեամբ անցան։

Թիֆլիսից մտաւորապէս և վերստ նուաորութեամբ, դեպի հարաւային կողմը, գտնուում է Միւրանաուր ասիւն կեղեղին, որ ունի իր մէջ սրբերի մասունքներ։ Յուլիսի 5-ին, երկուշաբթի օր, այդ կեղեղեւ տուն էր։

Գարձեալ խնդրում ենք մեր բոլոր թղթակիցներին մարտը, պարզ և որոշ գրել։ Նոյնպէս խնդրում ենք շատ մանր տառերով չը գրել։ Մարդու համար, որ կանոնաւոր կերպով ուսած չէ լեզու, ամօթ չէ, եթէ փոքր ինչ սխալներով է գրում, բայց ծիծաղելի է, երբ հայը իր տառախաւերը, ուղղագրութեան ու քերականութեան սխալները ծածկելու համար, կարծես դիմամբ անարժէք է գրում։

Գարձեալ խնդրում ենք մեր բոլոր թղթակիցներին մարտը, պարզ և որոշ գրել։ Նոյնպէս խնդրում ենք շատ մանր տառերով չը գրել։ Մարդու համար, որ կանոնաւոր կերպով ուսած չէ լեզու, ամօթ չէ, եթէ փոքր ինչ սխալներով է գրում, բայց ծիծաղելի է, երբ հայը իր տառախաւերը, ուղղագրութեան ու քերականութեան սխալները ծածկելու համար, կարծես դիմամբ անարժէք է գրում։

Լրագրիները հարգում են որ Ամերիկա դիւանը հրէաներից մի 400 հոգի կրկին այս օրերս վերադարձել են Ռուսաստան։

Մայրաքաղաքի լրագրիներում կարդում ենք, որ ներքին գործերի մինիստր կան Տօլստոյ մի ընդունութեան ժամանակ խօսելով հարուստ հրեայ պ. Պոլախովի հետ, հրապարակաբար յայտնեց որ նա ընդդէմ էր միշտ հրեաների հալածանքներին և սրտից ցատկ նայում էր նրանց մարդին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԽԱԿԱՆ ԿՐՈՒԹԻՒՆԸ ՖԲԱՆՍԻԱՅԻ ՄԷՑ

Ժամանակակից Ֆրանսիայի մէջ բոլոր գործերը լաւ չեն դնում, գրում է «ԴՕԵՆ»։

Թիւնը շատ գեղեցիկ է և ճաղկեցում է դրացիների նստանձը։

Բայց Ֆրանսիայի առաջագիմութեան գործի մէջ մի կողմ կայ, որ ոչ թէ միայն նախանձի, այլ և զարմանքի առարկայ կարող է լինել։ Մենք խօսում ենք այն անուփոր աջողութիւնների մասին որ ունեցել է Ֆրանսիան ժողովրդական լուսաւորութեան գործի մէջ և այն եռանդի մասին, որով Ֆրանսիան, լուսաւորութեան տարածելը ժողովրդի բոլոր գասակարգերի մէջ ներկայի առաջին և ամենակենսական խնդիր համարելով ձգտում է այդ խնդրի իրաւորմանը։

Մեր առաջն է Ֆրանսիական ժողովրդական լուսաւորութեան մինիստր Ֆերրիի ճառը որ նա արտասանեց Տրոյսքի մէջ տեղեկական կրթութեան սիրողների ընկերութեան ուսումնարանի աշակերտներին պարզեղբ բաժանելու ժամանակ։

Մինիստրը խոստովանում է, որ շուրտարների ընթացքում շատ ուսումնարաններ են բացված։ Ուսումնարանների համար որոշած գումարը շնորհիւ ուսումնարանների բանալը ոչ մի բոլոր չէ զազարելը ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը միջին թիւով ա մեն օր երեք ուսումնարան է բանում։

Միւս վերանորոգութիւնները և մի և նոյն ժամանակ հասարակական և քաղաքական վերանորոգութիւններից ամենանշանաւորն է։

Այսպէս թէ այնպէս ուսումնարանական վերանորոգութեան գործի մէջ Ֆրանսիան կէս ձանապարհի վրա չի մնայ։

Այդքան դժուար է մաքաւել տգիտութեան դէմ։ Եւ այն էլ Ֆրանսիայի մէջ որտեղ այդ մաքաւման համար գործ են դրվում ամենեւեանորո միջոցներ թէ բարոյական և թէ նիւթական։

Ստում են, որ Ֆրանսիան որդմելի պատկեր է ներկայացնում։ Բայց որդմելի չեն մի կրկին մասին, ուր ետ է գալիս մտաւոր կեանքը, որտեղ ձգտում են հասնել ոչ թէ միայն նիւթական բարօրութեանը, այլ և բարոյական կատարելագործմանը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիեննայի «Presse» լրագրին բազմապէսուից հարգում են յուլիսի 6-ից, որ Պապուս քրիստոնեաների և հրեաների մէջ կու ծագեց։

ընթաց երեկոցան, հրէաների տներում հարիւրից աւելի պատահաններ են կորսուած:

«Times» լրագիրը, յուլիսի 5-ից, մէկ երկար առաջնորդող յօդուած է նուիրում եգիպտական գործերին: Եստեղով Անգլիայի և Ֆրանսիայի մէջ եղած յարաբերութիւնների մասին, լրագիրը աւտում է, թէ Ֆրանսիան միջամտելու առանձին պատրաստակամութիւն չը ցոյց տուեց, բայց մի և նոյն ժամանակ, արգելք էլ չեղաւ անգլիական կառավարութեանը: Եթէ միջամտութիւնը անհրաժեշտ կը լինի, այն ժամանակ ֆրանսիական դրօշակը անգլիական դրօշակի նետ միասին կը ծածանի, թէպէտ միջամտութեան համար պատրաստակամութիւնը, զինուորական Անգլիայի վրա կրնի: Ֆրանսիան և Անգլիան երկուսն էլ հաւատարիմ են իրանց դաշնակցութեան, որին այդպիսի մեծ դին են տալիս, թէպէտ, ի հարկէ, այդ պետութիւններից թէ մէկը և թէ միւրը ընականապէս չենուում են իրանց մասնաւոր շահերին համապատասխանող մասնաւոր քաղաքականութեանը: Երանք միշտ դաշնակցներն և բարեկամներ կը լինեն և կը մնան:

— Եւրոպայում տեղեկութիւններ են ստացված Կ. Պոլսից, որ թիւրքերը Հնդկաստանի մասնաւոր կանաների մէջ սաստիկ պրօպագանդա են անում Անգլիայի դէմ Այդ նպատակով, Թիւրքիայից դաշնազան լրագիրների ամբողջ հակեր են ուղարկված Հնդկաստան:

— «Köln. Zeitung» լրագիրն Լոնդոնից հեռագրում են յուլիսի 8-ից, որ անգլիական կառավարութիւնը անհանդիմ է Ֆրանսիայի պատերազմական պատրաստութիւնները տեսնելով, որոնց նպատակը և չափերը իրան համար անբարեհաճ են:

— Բէլգիայում ազատամիտները ընտրողական մի նոր յաղթութիւն կատարեցին, որից երևում է, որ կիլերական աղբեղութիւնը ընկնում է այդ երկրում: Դեմոկրատ, որ վաղուց արդէն կղերական պատգամաւորներ էին ընտրվում, այս օրերս, նախկին պատգամաւոր կղերական վատէյճի մահից յետոյ, ընտրվեցաւ ազատամիտ կանոնադատ Կիլերի: Բելգիական լրագիրները ասում են, որ շուտով կը քանդվի կղերական կուսակցութիւնը, որը աւելի և աւելի կորցնում է իր նշանակութիւնը մինչև անգամ այնպիսի քաղաքներում, որոնք առաջ յայտնի էին իրանց կղերականութեամբ:

— Բերլինի լրագիրները խօսքերով, պրոտական պատգամաւորների ժողովի անդամների ընդհանուր ընտրութիւնները կը սկսվեն սեպտեմբերի 28-ից և կը շարունակվեն մինչև հոկտեմբերի 6-ը:

— «Բէլգիայի ընկերութեանը» Կուրլիսից հեռագրում են, որ այնտեղ կայանաւորված են վեց բանուորներ, որոնք մեղադրվում են երիտասարդ կէնի սպանութեան և պետական յանցանքի մէջ: Եր կայանաւորութիւններ կատարվեցան Լոնդոնում և Արդալում. այդ երկու նահանգներում կայանաւորվածները թիւը 23-ի է հասնում: Բոլոր կայանաւորվածները Կուրլին են ընկրված:

— Լոնդոնում ըստ տարածվեցաւ, որ իրլանդիայում բացվել է դատարանի Կուրլինի արքեպիսկոպոս Մակ-Կլերին սպանելու նպատակով, որը, ինչպէս յայտնի է, ամենապատիւսը կախկողման է իրլանդական կաթոլիկ հոգևորականութեան մէջ: Ինչպէս երևում է, Մակ-Կլեր նախապատգամութեան ստացաւ, որը տարից նրան աւելի զգուշ լինել:

— Ինչպէս երևում է, Բրէլիոյ հարցը վեռ շուտ կի մտնի Պայտնի է, որ պետական կիլերի նախկին պատգամաւոր Արդալը յոյս ունէր այդ խնդիրը երկրորդական ճանապարհով լուծել: Եւ որպէս ժողովին մի օրինադիր առաջարկեց, որով պարլամենտի ամեն մի անդամին, պէրին թէ պատգամաւորին, իրաւունք է արվում ընտրել կամ կրօնական և կամ քաղաքական երզուած: Լորդերի ժողովը, յունիսի 23-ին քննելով այդ օրինադիրը, մեղքից նրան 76 ձայների մեծամասնութեամբ:

### ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶՂԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
Ս. ՊԵՏԵՐՈՒԲՈՒԿ, 6 յուլիսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հերքում է «Новости» լրագրի հաղորդած լուրը խնդիրների մասնաժողովի քննութեան և նրա մէջ գտնված անկարգութիւնների մասին: Անկարգութիւններ չեն երևում, քննութիւն չէ եղած: Վախճանվեցաւ հնագէտ Պրոխորով: Չերինի մօտ թաղված վազօնները շատ խորն են գնացել և դեռ ևս փորված չեն: Բարձրա-

զոյն հրամանով այնտեղ հասաւ գնեւորակ կլեզեցի: Աշխատանքները աւելի եռանդով են կատարվում: Օրէօլ-Տուլայի ամբողջ շերջանք ապահով չէ: Օտրադա կայարանի մօտ նոր փոս է բացվել: Ապրանքների գնացքները ուղարկվում են կողմնակի ճանապարհով Օրէօլ-Նիցեց-Տուլայի վրա:

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒՄ, 6 յուլիսի: Պորտ-Սայիդի մէջ սպասում են բեդուինների յարձակմանը: Արաբի-փաշա ամրացել է Կօֆէէրեվա-րում: Ալէքսանդրիայի մօտ: Սէյմուր հրատարակեց մի մանիֆեստ: Ալէքսանդրիայի մէջ կարգապահութեան վերականգնելը նա իր վրա է առնում: Հրամայված է հրդեհ գցողներին հրացանի առնել, բայց հրդեհները չեն դադարում:

Ս. ՊԵՏԵՐՈՒԲՈՒԿ, 6 յուլիսի: Պետական բանկի 5% տոմսակր առաջին շրջանի արժէ 93 ռ. 50 1/2 Կ., երկրորդ 90 ռ. 50 Կ., երրորդ 90 ռ. 62 1/2 Կ., չորրորդ 90 ռ. 25 Կ., հինգերորդ 90 ռ. 25 Կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակր արժէ 212 ռ. 50 Կ., երկրորդ 210 ռ. 25 Կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակր արժէ 89 ռ. 12 Կ., երկրորդ 89 ռ. 25 Կ., երրորդ 89 ռ. 25 Կ., ոսկի 8 ռ. 16 Կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24 1/25 պէնս, Ամստերդամի վրա 122 ռ. 50 պէնս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 206 մարկ 75 պֆ., Գաբրիելի վրա 254 ֆրանկ: Բորսայի տրամադրութիւնը բարեյաջող է:

### ԽՈՍՏԱՐԱՐԱԿՆԵՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՆԻ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՐԱՒԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԿ, Գօրծիմակի պրօպագանդի վրա, տուն ճարտարապետ Բէլի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոցան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներէ:

ՄԱՐԻԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ խորհուրդը իւր երկուսը զարդոցներու դասաւորվածեան համար գաղ ուսումնական տարուայ սկզբից հրատարակում է. երկու ուսուցիչներ, տարրական ուսման մայրկնի լեզուով, իւրաքանչիւրին 600 ուսուցիչ և սենեակի դպրոցում: Նոյնպէս երկու ուսուցչուհիներ, մէկին 500 ուսուցիչ, միւսին 450 և սենեակի դպրոցում: Երկու առաջին դասարաններում տղայաց և օրիորդաց հայոց լեզուի, հայոց և ռուսաց վայելչագրութեան ուսուցիչ— 600 ուսուցիչ: Օրիորդաց առաջին դասարանը ուսուց լեզուի, թուրքաբանութեան և աշխարհագրութեան ուսուցչուհի— 600 ուսուցիչ: Տեսուչ ուսուցիչ տղայաց դասարանը ուսուց լեզուի, թուրքաբանութեան և աշխարհագրութեան— 1200 ուսուցիչ:

Մանրամասն պայմանները կարելի է իմանալ գրաւոր կերպիւ խորհրդից, որին թող բարեհաճեն դիմել ցանկացողները այսպէս: Բաքու.

Совѣтъ Армянскаго Человѣколюбиваго Общества, յայտնելով նոյնպէս և իրանց պայմանները և հասցէն: 3—3

Մի հայ երիտասարդ որ մի քանի տարի առաջ երկար ժամանակ ծառայել է «Մշակի» խմբագրութեան մէջ, որպէս ջրվող, ՅԱՆԿԱՆՈՒՄ է ունենալ մի որ և է ծառայութիւն: Զանկացողները կարող են իրանց հասցէն թողնել խմբագրութեան մէջ: 3—5

ՄԻ ՀԱՄԱԼԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսում է ապրում, յանձն է առնում պարսկերէն երեխաների հետ թէ արքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հետեւեալ հասցեով. Մանգլիս, Գաբրիէլ Միրզօեւ, Վ. Րոշք, դաճա Մարօն Տիմօեւօւ:

ՄԱՄՈՒԻ ՏԱԿԻՑ դուրս եկաւ «Էն էլ իմ սաղը»: Ազդեցիկ, սիրոյ, ժողովրդական, երգիծարանական... բանաստեղծութեանց I հատորը: Գինն է ճանապարհի ծախքով հանդերձ 1 ռուբլ:

Օտարաքաղաքացիք թող բարեհաճեն դիմել հետեւեալ հասցեներին՝ Իւանու Տեմովիչու Տեմովիչու (на фабрику Сади-оглы) կամ ուղղակի հեղինակին՝ Կեռէշ Սրօսկօւսկօ յուր փոստային կայանի 1-ից ու ուշ: Հինութեան ՆԱՐԱԿԻՆԸ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ կարելի է տեսնել վարչութեան մէջ ԱՄԵՆ ՕՐ տաւառեան 9-ից մինչև 1 ժամը: 3—3

Թիֆլիսում կարելի է ստանալ և Սալի-Օզլու ճիւղի խմբագրութիւններում— Գօրծիմակի պրօպագանդի վրա Շիօեվի տանը և Սիօեի փողոցի վրայ Անանովի նոր շինութեանում: Ծախվում է և գրավաճառների մօտ: 5—5

Ներսիսեան դպրանոցի բարձր դասաւան աշակերտներից մինը կամենում է պատրաստել աշակերտներ և աշակերտուհիներ՝ բոլոր շայ դպրոցների ստորին և միջին դասարանաց համար: Զանկացողք թող դիմեն Ծովիանովի կարվանսարայում պ. Գրիգոր Կակեանի խանութը № 1.

### Въ Редаціи газеты «МПАКЪ»

Продается БРОШЮРА «ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.»

Д. Григорія АРЦРУНИ. Брошюра напечатана въ Москвѣ. Цѣна 25 коп.

Թիֆլիսի ԲԱՂԱՐԱՅԻՆ ՎԱՐՈՒԹԻՒՆԸ հրատարակում է ցանկացողներին յանձն առնել վերայի ՎԱՄՈՒՐՁԻ ՀՈՂԷ և ԲԱՐԷ շինութիւնները: Զայտարարութիւնները պէտք է ներկայացնել քաղաքային վարչութեանը օգոստոսի 1-ից ու ուշ: Հինութեան ՆԱՐԱԿԻՆԸ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ կարելի է տեսնել վարչութեան մէջ ԱՄԵՆ ՕՐ տաւառեան 9-ից մինչև 1 ժամը: 3—3

Մի հայ ՊԱՐՏԻՉՊԱՆ (Բաղմանդ) Աւետիս ԱՐԱՄԵԱՆՑ վասպուրականի վաւ Քաղաքից Կուզենար պարտիզանի տեղ գտնել Թիֆլիսում է սաղի վրա Գրիգորի զինվորի տանը, № 58.

САДОВНИКЪ Армянинъ, Аветисъ Арамянъ иже ВАНА (Турецкой Арменіи). Желаетъ имѣть мѣсто садовника въ Тифлисѣ. Спросите на Пескахъ домъ Димитрія Чиквіани № 58 4—5

Մի ջի փողոց, Կաթօլիկ չեսկայա փողոցի անկիւն № 13.  
Աւելի էման, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻՆՆԱՅԻ ՄԵՐԵԼ, ամենայն տեսակի, ֆրանսիական և անգլիական երկաթէ կԱՎԱՍԵՐ 8—30 ռ., չամառաներ 250—25 ռ., սակօլջածներ 1. 30—12 ռ., սոււնի օւոկնի եր ճանապարհի 6—35 ռ., մարաններ (погребцы) 6—25 ռ., սամօվարներ 60 Կ.—1.25 Բուսուր, կուխօնի պղնձե ամաններ, Գերմանիայի երկաթէ կմալով ամաններ, ու մի վալնիկն եր մրամօրնի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու լույսի 6—32 ռ., ու վոլվէրներ ամենայն տեսակի 3. 50—30 ռ., պատրաններ (գուլաններ) թեփօլէրի, սիգար Ռէնգարդի ֆարրիկից պապիլոն և թամբաքու Կուշարօլի գրիլի պապիլոնի 5.000 ՖՈՒՆՏ ԹԵՑ (այ) եր. ՊԱՊՈՎՆԵՐԻ, թիփլիսի, (ուսուր շայու և կաֆէի) կիւնէմի. կօֆէ կիւնէմի և Միլեյսօնի. Պետերբուրգու 40—1 ռ. 25 Կ. հայկերէն ամենայն տեսակի 28 Կ.—240 ռ., պրորկայ գինեվաճառների, հանքային և դարիջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (ՄԱՊԻՆ), պարտաներ սամովարի և շայու, դանակ շանգայ զանազան ֆարրիկաների 1 ռ. 20 Կ.—25 ռ. դուժինը, գրչակոթներ 1 ռ. 80 Կ.—5—60 Կ. դանակ ջրի 1—60 Կ.—12 ռ., դասական հացի 20 Կ.—1 ռ., հատը, կուխօնի 1—40 մինչև 3—20 Կ. պրիբօր. միս կորելու մաշինայ. Անգլիական ութոններ, Բրիտանիայի շայնիկներ, կաֆէի կիւնէմի ամենայն տեսակի, Չաղապներ կաֆէի համար, ֆիլտր—Չուր. մարթիլու, կրտսմալ կարթիկէն 18 Կ., վաքս Ֆրանսիայի ձապոյ, թուղթ փայտի, կանգրտներ, սուրբուշ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարտատուակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիկներ, գրչակներ սեղանի և շայու ֆրաժէ, վարչակի և րրիտանիկ դուժինը 1—50 Կ. մինչև 12 ռ., և շայու 45 Կ.—5 ռ., չուսմիլէք 45 Կ.—5 ռ., շամառաններ ամեն տեսակ 25 Կ.—12 ռ. Չուլտո, պրօսպարկաներ վարչակու, Ռեքիլի ՎԱՍՏԵՐԻ, ամեն տեսակի, գուլաններ կանանց և մարկիներ 15 Կ.—50 Կ. Չուլտո, շայնիկներ, մարդկերանց գարուստիկներ, գոնակներ 35 Կ.—4—50 Կ., հատ, անձրեկի և շալի. սանդղիկ շիբույու ոսկորէ, գուտապիլոնի և փայտէ, շտականեր գրի, շոթի, սապակի, պոլի և կարտի համար. չուլթի թէլ (бумага) մատուի կօժի և շալի (гарусъ) Ֆէլչատէք մարդկերանց և կանանց, պրոտաններ, ջիաններ, պապիլոնի ամաններ և մանր գոլանտերիսի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 Կ.—30 Կ., կտոր, հոտապէն ջրեր, պուրթա, Գլիցերին ջրի քաքալ, հոտապէս պարաշոկներ ՎԻՍԵՐ ԼԱՐՈՒՍՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:  
Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԻՆ ՏԵՐ ՆԿԱՂՈՒՍԵԱՆՑԻ պահեստում. (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.  
Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցեով. Թիֆլիսէ Միխաիլու Մ. Թերշ-Նիկոգոսօւ:  
87—180